

Քանզի ոչ է պարտ քրիստոնէից եւ չվայելէ  
ամբարհաւածել կամ հպարտանալ, ըստ հե-  
թանոսաց, որպէս ասէ Առաքեալն թէ Ամե-  
նեքեան, որք կամիցին աստուածպաշտու-  
թեամբ կեալ ի Քրիստոս Յիսուս, ի հալա- 200  
ծանս կայցեն. եւ թէ Հայեցարուք ի զօրա-  
դլուին հաւատոց եւ ի կատարումն Յիսուս,  
որ փոխանակ որ նմա առաջի կայր՝ յանձն  
էսո զխաչ եւ այլն. զի Տէրն մեր խոնար-  
հութեամբ եւ աղքատութեամբ եկն յաչ- 205  
խարհս, եւ թէպէտ թագաւոր թագաւորաց  
եւ Աստուած աստուծոց էր, ի յայրին ծնաւ  
եւ ի մսուր անբանից եղաւ: Վա՛յ զիս. ապա  
մեք ո՛րչափ հեզ եւ հանդարտ լինելոց եմք,  
որպէս ինքն ասէ. Յինէն ուսարուք զի ես հեզ 210  
եմ եւ խոնարհ. զայս խոնարհութիւնս ի  
Փռանկան տեսաք. եւ զոհացեալ փառս տվաք  
Աստուծոյ, որ այսպիսի փառք եւ մեծութիւն  
եա նոցա Աստուած:

#### ՍԱՆ ՃՈՒԱՆ

Եւ յետ աւուրց ինչ զնացաք ի Սան  
ձուան, որ է Սուրբ Յոհանն աւետարանիչն:  
Եւ այն յոյժ մեծ եւ փառաւոր էր, ունէր եր-  
կու սրիղալ. եւ հազար հիւանդ կայր ի նմա.  
Եւ կայր առջեւն բարձր, զեղին մէրմէռէ ար- 5  
ձան, եւ ի դլուին ոսկի խաչ: Եւ այնպէս  
սահմանք է այն երկիրն, զի ամէն եկեղեցոյ

208 յանրանից: